ՅՕԴՈՒԱԾ-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՑԼԻ ԵՒ ՕՁԱՎԻՇԱՊԻ ԱՍՏՂԱՅԻՆ-ԵՂԱՆԱԿԱՅԻՆ ԿՈԴԵՐԸ ՀԻՆ ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԱՅԵԱՑՔՈՒՄ[1]

ԳԱԳԻԿ ՄԱՐՏՈՅԵԱՆ
martoyangagik474@gmail.co

Լօռիփամբակեան տիպի հայկական գորգի ռոմբը, Եղէգնաձորի վիշապի թագակիր ցուլը եւ Վանքի լճի փորագրապատկերը

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

ԺԹ. դարի Լօռիփամբակեան տիպի հայկական մի գորգի զարդանախշերում ծայրերը հատած սպիտակ շեղանկիւն քառանկիւնու ուշագրաւ մանրամասնը զարմացնում է նորագոյն ժամանակներում Եղէգնաձորից յայտնաբերուած թագակիր ցլի պատկերով վիշապաքարի եւ Թոխմախան վանքի լճի յայտնի վիշապաքարի փորագրապատկերների հետ իր բացառիկ նոյնութեամբ: Պատկերուած է միեւնոյն թագակիր ցլի գլուխը: Ցուլը դիմահայեաց զոյգ թռչունների ֆոնին է՝ նման Թոխմախան վանքի լճի վիշապաքարի թռչուններին, որոնք նոյնպէս դիմահայեաց են: Տարբե-

[1] Հայ բանագիտութեան մէջ Ցլին եւ Վիշապին վերաբերող առասպելաբանական պատկերացումների մասին բազմաթիւ ուշագրաւ անդրադարձեր են կատարուել: Յօդուածը չծանրաբեռնելու համար նպատակայարմար չենք համարում բոլոր տեսակէտերը քննել առանձին: Այստեղ մեր խնդիրը առասպելական այդ 2 արարածներին աստղային երկնքում որոնելն է, ինչի վերաբերեալ հայ բանագիտութեան մէջ մեզ որեւէ ուսումնասիրութիւն յայտնի չէ:

րութիւնն այն է, որ վիշապաքարերի ցուլերի բերանից ջուր է յորդում, իսկ գորգի ցուլի բերանից՝ ոչ, ինչպէս նաեւ թռչունները Թոխմախան վանքի լճի վիշապաքարի վրայ կռունկ կամ արագիլ են յիշեցնում, իսկ գորգի վրայ ոճաւորուած են:

Սարուխանի վիշապի գլխի թագը

Համարւում է, որ Եղէգնաձորի վիշապը, որը քաղաքային այգի է տեղափոխուել, Սարուխանից յայտնաբերուած վիշապի հետ միասին նախապէս նոյն տարածքում է գտնուել[2]: Հայ–իտալական արշաւախմբի 1994-2011ի գործունէութեան ընթացքում Սարուխան գիւղում յայտնաբերած վիշապաքարի ցլի գլխի 3 ելուստով պարզորոշ թագը հաստատում է, որ Եղէգնաձորի վիշապի գլխին նոյնպէս թագ է պատկերուած:

Լոռիփամբակեան գորգի սպիտակ շեղ քառանկիւնի թագակիր ցլի երկու կողմերում եւս ցլեր կան, բայց այնպէս, որ եռանկիւնաձեւ մռութը երկու ցլի համար էլ ընդհանուր է: Մի ցուլն ուղիղ դիրքով է, միւսը՝ գլխիվայր շրջուած: Տպաւորութիւն է ստեղծւում, որ նոյն ցուլը շրջանաձեւ պտոյտի մէջ է գտնւում: Այդպիսի նոյնական եւս 2 ցուլ սպիտակ շեղ քառանկիւնու ներքեւի հատուածում են: Բոլոր 4 ցուլերն էլ անթագ են: Վերեւի պտտուող 2 ցուլերի ներքեւում 4 վիշապ կայ[3]:

Մէկ այլ՝ դարձեալ արտերկրեայ մասնաւոր հաւաքածուներում պահուող «Խնձորեսկ» տիպաբանական խմբին պատկանող, նոյնպէս ԺԹ. դարի

---

[2] Սիմոն Հմայակեան, Հայկ Յակոբեան, Նորայր Հազէեան, Մարինէ Մելքոնեան, «Սարուխանի 'վիշապը'», *Վիշապ քարակոթողները*, «Գիտութիւն» հրատ. Երեւան, 2015, էջ 219-21:

[3] Վիշապաքարերի մասին առաջին ուսումնասիրութիւններն Ատրպետի, Նիկողայոս Մառի եւ Եակով Սմիռնովի, Աշխարհաբեկ Քալանթարի ձեռամբ Ի. դարի առաջին կէսում են ասպարէզ իջել, այդ պատճառով գրեթէ բացառւում է, որ ԺԹ. դարի լոռիփամբակեան գորգի զարդանախշային յօրինուածքի հեղինակը կարող էր ազդուած լինել իր տեսած վիշապաքարերի պատկերագրութիւնից: Մանաւանդ որ վիշապաքարի թագակիր ցլի պատկերը բոլորովին վերջերս է յայտնի դարձել: Առաւել հաւանական է, որ գորգի պատկերային խորհրդաբանութիւնը ժողովրդական յիշողութեան արգասիք է:

«Խնձորեսկ» տիպաբանական
խմբի վիշապագորգը

վիշապագորգի վրայ պատկերուած են 3 ռոմբեր[4], որոնց մէջ մուգ եւ բաց գոյնի ութական վիշապներ կան, իսկ իւրաքանչիւրի կենտրոնի սեղան երկրաչափական պատկերների մէջ վիշապները կարծես պտտուող կեռխաչ են ձեւաւորում: Ռոմբերի մէջ, վերին հատուածներում հորիզոնական շարուած վեցական աստղ է պատկերուած, ինչն ուղղակիօրէն յուշում է, որ յօրինուածքը աստղային երկնքի հետ կապուած ինչ-ինչ իրողութիւններ է մատնանշում: Շեղ քառանկիւնիները 3 գոյն ունեն՝ կանաչ, կարմիր եւ սպիտակ, որոնք տարուան 3 եղանակներն են խորհրդանշում՝ կանաչը որպէս գարնան գոյն, կարմիրը՝ հասուն այգիներով ամռան, իսկ սպիտակը՝ ձիւնաճերմակ ձմռան[5]:

ՎԻՇԱՊԸ (ՕՁԸ) ԵՒ ՅՈՒԼՆ ԱՍՏՂԱՅԻՆ ԵՐԿՆՔՈՒՄ

Յայտնի է, որ աստղային երկնքում Յուլը Կենդանաշրջանի գօտու մէջ մտնող համաստեղութիւն է եւ իր տարեկան օրինաչափ «պտոյտով», ծագումով եւ խոնարհումով (առասպելաբանաստեղծական մտածողութեամբ՝ «ծնունդով» եւ «մահուամբ») եղանակային-օրացուցային նշանացոյց է ծա-

[4] Ընդունուած է ասել խորաններ՝ ի նմանութիւն հայ միջնադարեան ձեռագրերի մանրանկարների խորանների:

[5] Տարին 3 եղանակների բաժանելու աւանդոյթը դեռեւս Հին Միջագետքից է յայտնի: Ենթադրաբար Ք. ա. 1000ին կազմուած բաբելոնեան MUL. APIN (Գութանի աստղ) շարադրանքում աստղային երկինքը բաժանուած է Էա, Անու եւ Էնլիլ աստուածների միջեւ, որոնք վերահսկում են տարուայ ցուրտ եւ տաք եղանակները (Ճ. Ван – Дер – Варден, *Пробуждающаяся наука II. Рождение астрономии* (Արթնացող գիտութիւն II. Աստղագիտութեան ծնունդը), «Գիտութիւն» հրատ., Մոսկուա 1991, էջ 90-91): Մեր պատմիչներից Թովմա Արծրունին Թ.-Ժ. դարերում տարին 2 եղանակի՝ ձմռան եւ ամռան բաժանելով, նշում էր, որ դրան կարող է աւելանալ գարունը (Թովմա Արծրունի եւ Անանուն, *Պատմութիւն տանն Արծրունեաց*, «Մագաղաթ» հրատ., Երեւան, 2006, էջ III, Ը, Թ), այսինքն՝ աշունը միացած էր համարում ձմռանը:

ռայել հազարամեակներ շարունակ: Մօտաւորապէս[6] Ք.ա. 4300-2150ին համապատասխանել է գարնան առաջին ամսին, իսկ մօտաւորապէս Ք.ա. 2150-Ք.ե. 10ին գարնան երկրորդ ամիսն է եղել: Մեր ժամանակներում Ցուլն Ապրիլի եւ Մայիսի միջեւ ընկած համաստեղութիւն է:

Նոյն օրացուցային նշանակութիւնը հնարաւոր չէ վերագրել Վիշապ համաստեղութեանը, քանի որ բեւեռին մօտ է, ուստի, ո՛չ ծագում է, ո՛չ էլ՝ խոնարհւում, այլ մշտապէս պտտւում է հորիզոնում: Նրա փոխարէն քննարկման ենթակայ ամենահաւանական համաստեղութիւնը Ցուլից 180 աղեղնային աստիճան հեռաւորութեան վրայ, հորիզոնում Ցուլի ուղիղ դէմ դիմաց գտնուող ներկայի Օձակրի Օձն է[7], որը թէեւ Կենդանաշրջանի գօտում ներառուած համաստեղութիւն չէ, բայց Արեւը նրա միջով անցնում է աշնանը, երբ պէտք է Կենդանաշրջանում Օձի հարեւան Կարիճ համաստեղութիւնով էլ անցնի:

Անկախ աստղային երկնքում Օձի՝ Միջազգային աստղագիտական ընկերութեան 1919ին հաստատած ներկայի պայմանական տարածքից, այս համաստեղութեան մասին տեղեակ է եղել դեռեւս Բ. դարի ուշ հելլենիստական աստղագէտ Կլաւդիոս Պտղոմէոսը, որն իր համաստեղութիւնների քարտարանում նրա միայն գլխի աստղերն է թուարկել[8]: Նրանից մէկ դար առաջ Օձ համաստեղութիւնը յիշատակում է նաեւ հռոմէացի բանաստեղծ Պուբլիոս Վերգիլիոս Մարօն իր *Մշակականք*ում: Գարի ցանելու ժամանակահատուածի մասին խօսելիս, նա հողագործին զգուշացնում էր որ եթէ չհետեւի, թէ ինչպէս է «*Կշէռքը հաւասարապէս կիսում լոյսն ու մութը*[9]*, ինչպէս են Արկտուրը, Այծերը եւ* ***պայծառ Օձը*** *ծագում, ապա նրա ճիգերը թիավարի ջանքերին կը նմանուեն, որն իր մակոյկն ալիքների դէմ է տա-*

---

[6] Շեշտում ենք՝ մօտաւորապէս, քանի որ հաշուարկը կարող է միքանի տարուայ սխալ թոյլատրել, բայց ոչ հարիւրամեակների: Անշուշտ, ոչ ոք չգիտէ, թէ 6000 կամ 4000 տարի առաջ Կենդանաշրջանի գօտում ինչ սահմաններ են ունեցել Ցուլ կամ Խոյ համաստեղութիւնները, բայց հաստատապէս յայտնի է, որ 12 համաստեղութիւնից իւրաքանչիւրին 30 աղեղնային աստիճանի տիրոյթ է յատկացուած եղել: Յայտնի է նաեւ այն, որ գարնանային օրահաւասարի կէտը մօտաւորապէս 2160 տարի է մնում Կենդանաշրջանի տուեալ համաստեղութիւնում: Եթէ համարւում է, որ գարնանային օրահաւասարի կէտը մօտաւորապէս 2200 թուականին է Ձկներ համաստեղութիւնից Ջրհոս համաստեղութիւն տեղափոխուելու, ուրեմն յետհաշուարկով վերոբերեալ մօտաւոր թուականներն են ստացւում:

[7] ԺԷ. դարի լեհ աստղագէտ Եան Հեւելիուսի աստղային երկնքի քարտէզում երկար պոչով Օձին պատկերուած ենք տեսնում Օձակրի ձեռքերում սեղմուած: Օձակիրն Օձ համաստեղութեանը 2 մասի է բաժանել:

[8] Клавдий Птоломей, *Альмагест или математическое сочинение в тринадцати книгах* (Ալմագեստ կամ ուսողական շարադրանք տասներեք գրքերում), «Գիտութիւն» հրատ., Մոսկուա, 1998, գիրք VII, էջ 5):

[9] Այսինքն՝ աշնանային օրահաւասարի ժամանակ:

նում»[10]: Հռոմի միտրայական սրբարանների շատ յայտնի տաւրոքտոնեան (գլասպանական) հարթաքանդակային տեսարաններում, որոնք Արեւ Միտրայի ուղին են ներկայացնում Կենդանաշրջանի համաստեղութիւններով, Օձ համաստեղութիւնը մշտապէս Կարիճ համաստեղութեան սերտ հարեւանութեամբ է պատկերւում: Կենդանաշրջանի գօտու 1653ին հրապարակուած մի բոլորակ քարտէզում, որն աստղագիտութեան պատմաբան Ալեքսանդր Սապլինն է մէջբերում իր աստղաբաշխական հանրագիտարանում՝ Աթանասիուս Կիրչէրի *Oedipus Aegyptiacus* գրքին յղում անելով, պատկերուած է Կարիճ աստուածը, որի երկու ոտքերը վիշապի գալարուող պոչեր են: Մակագրուած է Scorpius (Կարիճ) եւ միեւնոյն ժամանակ Tiphon[11] (Վիշապ յունական դիցաբանութեան մէջ): Սրանով աստղաբաշխները հնում ցոյց են տուել, որ Արեւը թէ՛ Օձ, թէ՛ Կարիճ նոյնաբնոյթ համաստեղութիւններով էլ անցնում է: ԺԹ. դարի ամերիկացի հետազօտող Ռիչարդ Հինքլի Ալէնը Օձի, որպէս առանձին համաստեղութեան գոյութիւնը մինչեւ միջագետքեան աստղաբաշխների ժամանակներ է հասցնում, ասելով, թէ «Եփրատեան աստղագէտները» Կարիճ համաստեղութեան վրայ կանգնած Օձակրին կամ նրա մի մասին (Օձին - Գ.Մ.) Nutsir - da անունով էին ճանաչում[12]:

Կենդանաշրջանի գօտու 1653ին հրապարակուած բոլորակ քարտէզը

Ըստ ազգագրագէտ Արմէն Սարգսեանի գրառած դաշտային նիւթերի, մինչեւ նորագոյն ժամանակներ պատկերացուել է, որ առասպելական վիշապը մեռնող արարած է, բայց մեռնելուց յետոյ էլ կարող է պիտանի լինել մարդկանց: Նա պատմում է, որ Լոռու մարզի Շամուտ գիւղից մօտ 25 քմ. հեռաւորութեան վրայ «Անհատի բինա» կոչուող սարուորների մի ամառանոցում 1,5-2 մ. երկարութեամբ քարեր են պառկած: Դրանց տեղացիները «Ուշաբի գոռեր», այսինքն՝ Վիշապի գերեզմանոցներ են անուանում: Երաշտի ժամանակ մեծահասակ սարուորները երեխաներին ասում են.

---

[10] Публий Вергилий, Буколики. Георгики. Энеида, (Հովուականք, Մշակականք, Էնէական), «Գեղարուեստական գրականութիւն» հրատ., Մոսկուա, 1979, հտր. I, էջ 175-210):

[11] А. Ю. Саплин, *Астрологический энциклопедический словарь*, (Աստղաբաշխական հանրագիտարանային բառարան), «Օլմա Պրէս» հրատ., Մոսկուա, 2001, էջ 209:

[12] Richard Hincley Allen, *Star-names and their meanings*, New York, Leipzig, London, Paris, 1899, էջ 299:

«Ուշաբը ջրի գլխին նստած՝ ջուրը կտրել ա. ջուր չկայ»: Այնուհետեւ պատուիրում են կժերով ջուր տանել, լցնել վիշապ քարերի վրայ բացուած շրջանաձեւ փոսերի մէջ, որ անձրեւ գայ[13]:

Օձը (լայն իմաստով՝ վիշապն) ուրեմն անձրեւաբեր, ջրաբեր առասպելական էակ է ընկալուել: Երբ Ք.ա. շուրջ 2150-Ք.ե. 10ին Արեւն աշնանը Կշէռք համաստեղութիւնից ելնելով, Կարիճ եւ Օձ է մտել, Օձը մէկ ամսուայ (Կենդանաշրջանի 30 աղեղնային աստիճանի չափը) ընթացքում աստիճանաբար հորիզոնից ցած է իջել՝ գետնի տակ՝ հորիզոնից ներքեւ անհետանալով: Դրա փոխարէն ծագել են հորիզոնի հակառակ կողմում գտնուող Ցուլի աստղերը: Նոյն ժամանակամիջոցում երկրային օձերն էլ, ցրտերը սկսուելու հետ, գետնի տակի իրենց բներն են քաշւում: Գարնանը միանգամայն հակառակ իրողութեանն են ականատես եղել. Արեւը Խոյից դուրս գալով, մտել է Ցուլ, որը մէկ ամսուայ ընթացքում աստիճանաբար հորիզոնից ցած է իջել, իսկ նրա փոխարէն Օձն է բարձրացել: Նոյն ժամանակ երկրային օձերը դուրս են գալիս գետնի տակից: Թուացել է, թէ Օձն ու Ցուլն անհաշտ թշնամանքի մէջ են. մէկի «ծնունդը» միւսի «մահով» է պայմանաւորուած, մէկն աշխարհ է եկել միւսի տեղը զբաղեցնելու, նրանից տարածք նուաճելու հաշուին: Հարիւրութսուն աղեղնային աստիճանի ներքոյ մէկ Ցուլն է սպանել Օձին, մէկ էլ Օձն է սպանել Ցլին:

Այս թշնամանքը դարերի խորքից եկող աստղաբաշխական ընկալման արդիւնք է: Հին աստղաբաշխները Կենդանաշրջանում 180 աղեղնային աստիճանի ներքոյ գտնուող համաստեղութիւնների մէկը միւսի նկատմամբ դիրքաւորուածութիւնը «երկնային կերպ (*ասպեկտ*)» կամ «ընդդիմութիւն» էին անուանում[14]: Հայոց Էֆիմերտէն[15] դա կոչում է «լրումն» եւ Ցուլի ու նրա դէմ դիմաց 180 աղեղնային աստիճանի ներքոյ գտնուող Կարիճի (աստղային երկնքում Օձի մերձաւոր հարեւանի) մասին ասում է, թէ մէկը միւսին «հակադիր հայեցուածով» է նայում[16]: ԺԳ. դարի մատենագիր Յովհաննէս Երզնկացին նոյնպէս հորիզոնի հակառակ ծայրերի երկու կենդանակերպերի դիրքը միմեանց նկատմամբ «բացասական» է կոչել. («*Յորժամ վեցիւք կենդանակօքն են հեռասպան, // Հարիւր ութսուն աստիճանօք են բացա-*

---

[13] Արմէն Սարգսեան, «Վիշապը հայոց բառ ու բանում» *Վիշապը հեքիաթի եւ իրականութեան սահմանին*, Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի հրատ., Երեւան, 2019, էջ 251-52:

[14] Секст Эмпирик, “Против астрологов”, *Сочинения т. II* («Ընդդէմ աստղաբաշխների», *Երկեր, հտր. Բ*), «Միտք» հրատ., Մոսկուա, 1976, էջ 176. նաեւ՝ Б. Ван – дер – Варден, էջ 311:

[15] Յունարէն «էֆեմերիս»՝ ամէնօրեայ բառից: Աստղաբաշխութեան մէջ գործածուել է «Երկնային լուսատուների ամէնօրեայ դիտարկումներ» իմաստով:

[16] *Գրգուկ, որ կոչի Էֆիմերտէ*, «Ապոլոն» հրատ., Երեւան, 1992, էջ 7-8:

սական»)[17]: Ե. դարի մատենագիր Եզնիկ Կողբացին եւս քննադատում էր իր ժամանակակիցների մէջ դեռեւս պահպանուած հեթանոսական հաւատալիքն առ այն, թէ վիշապին եզներով են հանում (բարձրացնում)[18]: Այսինքն՝ դա ընկալուել է այնպէս, որ Ցուլն աստղային երկնքում իջնում-խոնարհւում է, եւ դրա շնորհիւ Օձն է բարձրանում: Նոյն աստղային երեւոյթը Վանի Մալկարա գիւղում մի հաւատալիքի ձեւով վերապրել էր մինչեւ նորագոյն ժամանակներ. հաւատում էին, թէ վիշապը գոմէշից է ծնւում[19]: Այսինքն՝ Ցուլի «մահուանը»՝ հորիզոնից ներքեւ իջնելուն յաջորդում է Օձի աստղերի ծագումը: Մէկը միւսին հակադիր են մահով եւ ծնունդով: Միայն այս տեսանկիւնից կարելի է բացատրել օրփէոսեան[20] փիլիսոփաների այն առեղծուածային բանաձեւը, որը ամերիկացի հետազօտող Հարոլդ Վիլլոբին մէջբերում է Բ. դարի եկեղեցական մատենագիր Կղեմէս Աղեքսանդրացուց՝ «Ցուլն օձ է ծնում, օձը՝ ցուլ»[21]:

Օձի (Վիշապի) եւ Ցլի առասպելական թշնամանքի մէկ դրուագը, երբ այսպէս կոչուած Ամպրոպի աստուածը (Ցլի խորհրդանիշ կրողը) յաղթում է օձ-վիշապին, հանգամանալից ուսումնասիրել են Վիաչեսլաւ Իւանովը եւ Վլադիմիր Տոպորովը՝ բալթասլաւոնական հեքիաթները, հմայախօսութիւնները եւ բիլինային դիւցազնավէպը բանագիտական եւ լեզուաբանական համակողմանի քննութեան ենթարկելով: Նրանք պարզել են, որ բալթասլաւոնական ծիսաառասպելական աւանդոյթում կենտրոնական մոտիւ է Օձ-Վելէսի եւ Ամպրոպի աստուած Պերուն-Պերկունասի հակամարտութիւնը: Վերակազմուած առասպելը, որին հեղինակները «Հիմնական առասպել» անունն են տալիս, նկարագրում է, թէ ինչպէս վերեւում՝ լեռան վրայ, Կենաց ծառի գագաթին գտնուող Ամպրոպի աստուածը շանթահարում է լեռան ստորոտում, Կենաց ծառի արմատների մօտ գտնուող Օձին՝ այն բանից յետոյ, երբ վերջինս առեւանգում է ընտանի անասուններին: Պարտուած Օձն անհետանում է ծառի արմատների մէջ՝ ստորերկրեայ ջրերում: Օձի պարտութեանը յաջորդում է պտղաբերութեանը նպաստող անձրեւը[22]:

---

[17] *Յոհաննիսի Երզնկացւոյ տեփրակ համառօտ եւ լի իմաստախոհ բանիւք*, Նախիջեւան 1792, էջ 33-34: Վեցը Կենդանաշրջանի 6 համաստեղութիւններն են, որոնք փոփոխաբար երեւում են աստղային երկնքի տարեկան «պտոյտի» ժամանակ:

[18] Եզնկայ Կողբացւոյ Բագրեւանդայ եպիսկոպոսի *Եղծ աղանդոց*, Վենետիկ, Ս. Ղազար 1826, էջ I, ԻԵ:

[19] Վ. Խաչիկեան, *Մալկարայի հայ գաղութը*, տպ. «Փարոս», Փլովտիւ, 1943, էջ 125:

[20] Ք. ա. Զ. դարում Յունաստանում եւԹրակիայում ծագած փիլիսոփայական ուսմունք, որը կապուած էր առասպելական երգիչ Օրփէոսի անուան հետ:

[21] Harold R. Willoughby, *Pagan Regeneration, A Study of Mystery Initiations in the Greco-Roman World*, Chicago – Illinois 1929, էջ 94-95:

[22] В. В. Иванов, Вл. Н. Топоров, *Исследования в области славянских древностей*, (Հետազօտութիւններ սլաւոնական հնութիւնների շրջանում), «Գիտութիւն» հրատ., Մոսկուա, 1974, էջ 5):

Հիւսիսոռուսական հաւատալիքներում եւ ծէսերում յատուկ նշանակութիւն է ունեցել Ամպրոպի աստծոյ պատմական ժառանգորդ Իլիա (Եղիա) մարգարէի ցուլը կամ Իլիայի ոսկորը: Զ. դարի բիւզանդացի հեղինակ Պրոկոպիոս Կեսարացու հաղորդմամբ, «կայծակների արարչին» ցուլեր էին զոհաբերում: Սլաւոններն ընտրել են կարմիր ցուլերի, որոնք հունձքի եւ խոտհարքի ընթացքում պայծառ եղանակ պէտք է ապահովէին: Հաւատացել են, որ խնջոյքների ժամանակ ով «Իլիայի ոսկորից» մի կտոր պոկի եւ իր հետ կրի՝ Իլիան միշտ իր հետ կը լինի[23]:

Իւանովը եւ Տոպորովը իրենց ուսումնասիրութեամբ այն եզրակացութեանն են յանգել, որ «Հիմնական առասպել»ի մերձարեւելեան եւ բալթասլաւոնական տարբերակներից զատ հաւանական է, որ աւելի հնաւանդ առասպել է գոյութիւն ունեցել, որի համաձայն, Օձի հակառակորդը ոչ թէ Ամպրոպի աստուածն է եղել, այլ՝ Արեւը[24]:

Հայ ժողովրդական յիշողութիւնը պահպանել է ոչ միայն առասպելական Օձի (Վիշապի) եւ Ցլի միջեւ տեղի ունեցած մենամարտի մատնանշուած երկու տարբերակների, այլեւ վիշապին, ինչպէս նաեւ Ցլին յաղթած Արեւի առասպելոյթները: Ստորեւ քննենք դրանցից իւրաքանչիւրն առանձին:

ՎԻՇԱՊԻ ԴԷՄ ՑԼԻ ՏԱՐԱԾ ՅԱՂԹԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ ԱՒԱՆԴԱԶՐՈՅՑԸ

Այս աւանդազրոյցը հաղորդել է Կարկառի շրջանի (Արեւմտեան Հայաստան) Բերկրի գիւղացի Խուդօն: Գրառել է Ազատ Համբարեանը[25]: Պատմուել է իբրեւ Տաւրոս (Ցուլ) եւ Զագրոշ լեռների միջեւ տեղի ունեցած մենամարտ: Նրանցից երկուսն էլ սակայն եղջրակիր վիշապներ են ներկայացուում: Զագրոշը որոշել է կուլ տալ Տաւրոսին եւ մարտի է նետուել նրա դէմ, բայց Տաւրոսն այնպէս է հարուածել նրա ճակատին, որ վիշապի եղջիւրները պոկուել են: Մի եղջիւրը Վերին Միջագետքում թռել, ցցուել է գետնին եւ դարձել Մասիուս լեռ, միւսը խրուել է Արարատ լեռան կողը: Այս հարուածից շշմած Զագրոշը թիկունք է դարձրել, բայց մի հարուած էլ է ստացել, որից մարմինը պատռուել եւ դրանից ծոր է ձեւաւորել: Ձորի միջով Զաբ գետն է հոսում, որը վիշապի արիւնն է: Այնուհետեւ Զագրոշի փորի աղի ջրերը հասել են մինչեւ Վան եւ Վանայ լիճն են առաջացրել: Դրանից յետոյ պարտուած Զագրոշը քաշուել-հեռացել է[26]:

Ինչպէս տեսնում ենք, բացայայտ է հայկական Վիշապի եւ Ցուլի մասին այս աւանդազրոյցի նախնական աղերսը «Հիմնական առասպել»ին: Բացակայում է միայն Վիշապի պարտութեանը յաջորդող անձրեւը, բայց անձրեւի փոխարէն նկարագրւում են Վիշապի փորի Վանայ լիճ դարձած աղի

---

[23] Նոյն, էջ 169:
[24] Նոյն, էջ 154:
[25] Արամ Ղանալանեան, *Աւանդապատում*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1969, էջ 422:
[26] Նոյն, № 50, էջ 23 – 24:

ջրերը եւ արիւնը, որ գետի է վերածուել: Այսինքն՝ վիշապի պարտութիւնից յետոյ այնուամենայնիւ ջուր է հոսում, ինչը յիշեցնում է Փիւնիկէի արքայորդի Կադմոսի մասին յոյների պատմած առասպելը, թէ՝ Զեւսը Ցլի կերպարանքով առեւանգում է Կադմոսի քրոջը՝ Եւրոպային, իսկ Կադմոսը գնում է նրան որոնելու: Ճանապարհին վիթխարի օձը յարձակւում է Կադմոսի վրայ եւ հսկայական գալարներով նետւում է երկինք, ապա յորդառատ գետի նման մղւում է դէպի իր հակառակորդը: Կադմոսը սպանում է օձին, որի արիւնը ոռոգում է դաշտերի դալար սէզերը: Ժամանակ անց Կադմոսը՝ ինքը օձ է դառնում եւ տեղափոխւում երկինք[27]: Այս առասպելում նոյնպէս չկայ անձրեւ, բայց դրա փոխարէն կայ դաշտերի նորածիլ սէզերը ոռոգող վիշապի արիւն եւ Վիշապի մարմնի ու գետի համեմատութիւն:

Նոյնպիսի համեմատութիւնների հանդիպում ենք վեդայական Ինդրայի եւ նրա ախոյեան Վրիտրա վիշապի կռուի մասին առասպելում. Վրիտրան պառկած է լեռների վրայ, նրա դէմ Ինդրան մարտի է նետւում ինչպէս «կատաղած ցուլ»: Ինդրան սպանում է վիշապին եւ ազատութիւն է տալիս նրա որովայնում արգելափակուած տիեզերական ջրերին (7 ալիքուող գետ է բաց թողնում), որոնք վաղուց փափաքում էին ազատուել բանտուածութիւնից[28]:

Ասուածից կարելի է եզրակացնել.- 1) նախնական առասպելոյթում Վիշապի սպանութեանը յաջորդում է տիեզերական պտղաւորող ջրերի հոսքը, որոնք Կադմոսի առասպելում եղանակային որոշակի ցուցիչ են պարունակում, ակնարկելով տարուայ տաք ժամանակահատուածը, երբ ջրում են մարգերի դալար սէզերը: 2) Հայկական Տաւրոսի եւ Զագրոշի կռւում որեւէ հետք չի պահպանուել հոսող ջրերի պտղաբեր լինելու մասին: Այս աւանդազրոյցում իսպառ բացակայում են եղանակային ցուցիչները: Նախնական եղանակային փոփոխութեան բովանդակութիւնն աղարտուել եւ վերածուել է պարզ, բնապատկերային փոփոխութեան նկարագրութեան, իսկ գործող դիցաբանական կերպարները դարձել են լեռներ: Բայց այն, որ վիշապի եւ Ցլի կռիւը հայկական հաւատալիքներում նախապէս եղանակային-օրացուցային առասպելաբանութիւն է եղել, երեւում է ստորեւ ներկայացուող յաջորդ դիպաշարից, որտեղ ոչ թէ Ցուլն է յաղթանակ տանում Վիշապի նկատմամբ, այլ հակառակը՝ պարտւում է նրանից:

---

[27] Публий Овидий Назон, *Метаморфози* (Փոխակերպումներ), «Գեղարուեստական գրականութիւն» հրատ., Մոսկուա, 1977, էջ 81-84, 113-18). նաեւ՝ Гигин, *Мифы* (Առասպելներ), «Ալատէյա» հրատ., Սանկտ Պետերբուրգ, 2000, էջ 6:

[28] Ригведа, *Мандалы* I – IV, (Մանդալներ), «Գիտութիւն» հրատ., Մոսկուա 1989, *I*, էջ 32, 11, *II*, էջ 12, 3. նաեւ՝ **Э.** Н. Тёмкин, В. Г. Эрман, *Мифы Древней Индии* (Հին Հնդկաստանի առասպելները), «Գիտութիւն» հրատ., Մոսկուա 1982, էջ 38:

ԲՈՐ ԵԶԻ ՀԵՔԻԱԹԸ

«Բոր եզ» հեքիաթը[29] գրառուել է 1915ին Մշոյ Բաղլու գիւղացի Տոնէ Հովէեանից: Գրառել է Նազարէթ Մարտիրոսեանը: «Բոր» նշանակում է կարմիր: Եզը հենց այդ գոյնով էլ կոչւում է հեքիաթի միւս տարբերակում՝ «Կարմիր եզն ու հուշապ»[30], որը դարձեալ Մուշից է, 1916ին Սալըկան գիւղի նախկին բնակիչ Մարտիրոս Գէորգեանից գրառել է Արտաշէս Բարսեղեանը: Համառօտ դիպաշարը հետեւեալն է.

Խորթ մայրն ամուսնուց պահանջում է նրա 15 ամեայ որդուն հորը գցել: Հայրը կատարում է նրա կամքը. որդին 40 օր հորում է անցկացնում: Այդ ընթացքում տղային կերակրում է Բոր եզը, որի մի եղջիւրից մեղր է հոսում, միւսից՝ անմահութեան ջուր: Քառասուն օր անց, երբ տղային հորից 2 եզներով քաշում, հանում են, տեսնում են, որ կրկնակի անգամ մեծացել է եւ զօրացել: Խորթ մայրը Կարմիր եզան գաղտնիքն իմանալով, իր հարազատ որդուն էլ է ուզում հորում մեծացնել, բայց Եզան օգնութիւնը չստանալով, որդին հորում մաշւում, նիհարում է: Մայրը պահանջում է մորթել Կարմիր եզանը, բայց սա իր հովանաւորեալ տղայի հետ փախչում է: Նրան տանում, հանում է մի սարի գլուխ, որտեղ ծառ է աճում (բարդի): Տղան բարձրանում է ծառի վրայ: Յանկարծ քամի է սկսւում եւ «Արեւի երեսը բռնւում է». Վիշապն է մօտենում: Սա Բոր եզին տեսնելով, մարտակոչ է ուղղում նրան. «Կամ մաշ, կամ գիւլաշ», այսինքն՝ կամ հողային տարածք, կամ գօտեմարտ: «Գիւլաշ»՝ բղաւում է Կարմիր եզը: Կռւում Վիշապը սկսում է ուտել Կարմիր եզին: Մեռնելուց առաջ Եզը Վիշապին պատգամում է. «Ամանաթ (աւանդ - Գ.Մ.) Աստուած, ամանաթ ծառ»: Վիշապը նայում է ծառին եւ տեսնում է այնտեղ բարձրացած տղային, որին որդեգրում, տանում է իր պալատ: Պալատի սենեակներում մարդիկ, թռչուններ եւ գազաններ կան բանտարկուած: Մի սենեակում գայլի առջեւ խոտ է դրուած, ղոչի (խոյի - Գ.Մ.) առջեւ՝ միս: Մէկ այլ սենեակում Վիշապի 3 ոտանի ձին է, միւս սենեակում՝ սեւ, սպիտակ եւ կարմիր 3 հրեղէն ձիեր կան: Սրանք էլ յանձն են առնում տղային փախցնել Վիշապից: Տղան փախչելուց առաջ ազատ է արձակում մարդկանց, թռչուններին եւ գազաններին, վերացնում է շփոթը. գայլի առջեւ միս է դնում, խոյի առջեւ՝ խոտ: Գալիս, հասնում է Խազալ քաղաք, որը մշեցիների բարբառում մի տեսակ օձի անուն է[31]: Վիշապը հետապնդում է նրան եւ բռնել չկարողանալով, ջուրն ընկնում, խեղդւում է:

Ինչպէս տեսնում ենք, Բոր եզան հեքիաթում եւս ակնյայտ են «Հիմնական առասպել»ի ուրուագծերը՝ միայն այն տարբերութեամբ, որ Վիշապը ոչ

---

[29] *Հայ ժողովրդական հեքիաթներ* (ՀԺՀ), *հտր. XIII*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1985, էջ 161-77:

[30] *ՀԺՀ, հտր. XII*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1984, էջ 524-39:

[31] Հր. Աճառեան, *Հայկական գաւառական բառարան*, Լազարեան ճեմարան արեւելեան լեզուաց, Թիֆլիս 1913, էջ 445:

թէ սկզբում է պարտութիւն կրում, այլ՝ վերջում՝ ջրերի մէջ անհետանալով: Սկզբում նկարագրում է նրա անվերապահ յաղթանակը Ցլի, այսինքն՝ Ամպրոպի աստծոյ կենդանական ցուցիչի նկատմամբ: Առկայ է Վիշապի առեւանգած կենդանիների մոտիւը, սարը, այնտեղ աճող Կենաց ծառը, որի մասին Վիշապը խոստովանում է, թէ դրա շրջակայքն իր սովորական տեղն է, եւ այդ ծառի առջեւ է նա ամէն անգամ զանազան կենդանի արարածների յօշոտում[32]: Հայկական ժողովրդական այլ հեքիաթներ եւս հաստատում են, որ առասպելական Վիշապը Կենաց ծառի շուրջ է պտտւում եւ ձգտում է ուտել Ծառի վրայ բնակուող Զմռուտ ղուշի ձագերին: Թագաւորի 3 որդիներից արեւային յատկանիշերով բնութագրուող կրտսերը Մութ՝ հանդերձեալ աշխարհ ընկնելով, սպանում է Վիշապին եւ նրա թեւերի վրայ Լոյս աշխարհ՝ մեր աշխարհ է վերադառնում[33]: «Մութ աշխարհ» է համարուել տարուայ եղանակային այն շրջափուլը, երբ Արեւը նախ ամառային արեւադարձին սկսում է հեռանալ մեզանից, ապա աշնանը հասնում է օրահաւասարի կէտին, ինչի հետեւանքով գիշերները ցերեկների համեմատ երկարում են՝ ցերեկները շուտ են մթնում: Լոյս աշխարհ Արեւը վերադառնում է ձմեռային արեւադարձին, երբ ցերեկներն են սկսում երկարել:

Բոր եզան հեքիաթում նոյնպէս Կենաց ծառը բարձրացած 15ամեայ պատանին[34] Արեւն է, որը մինչ այդ 40 օր փոսում է անցկացնում՝ մի շրջան, երբ գարնանամուտի Մարտ ամսից սկսած, ձմեռը մաքառում է իր դիրքերը չզիջելու համար, օրերը փոփոխական կերպով դեռ ցուրտուտաք են, իսկ Արեւը դեռ զօրացած չէ, ե՛ւ կայ, ե՛ւ չկայ դրութեան մէջ է ու կարծես հորն ընկած լինելով, չի ջերմացնում: Հորն այս դէպքում գարնանային Զատկի տօնին նախորդող Մեծ Պահքի շրջանն է, որն ազգագրական ամենատարբեր շրջաններից գրառուած հայ ժողովրդական հանելուկները 7 գազանոց փոսի հետ են համեմատում («Եօթը գազանոց հոր, // Ծերին մի կարմիր խնձոր»)[35]: «Եօթ գազ»ը Մեծ Պահքի 7 շաբաթն է, որը 49 օր է կազմում, բայց քանի որ ոչ ոք չի կարող որոշել, թէ Զատկի տօնին նախորդող ցրտերը ստոյգ քանի օր կը տեւեն, միջինացուած 40 օր են ասել:

---

[32] *ՀԺՀ, հտր. XIII*, էջ 164:

[33] *ՀԺՇ, հտր. VII*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1979, էջ 11-15 («Լուս նան մթէն աշխարքնէն»), *հտր. II*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1959, էջ 23-38 («Անմահական խնձոր»), *հտր. VII*, էջ 585-97 («Ուսկէ խունձուրուն նաղլը»), *հտր. I*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1959, էջ 27-48 («Հազարան բլբուլ կամ Ալօ Դինոյի նաղլը»), *հտր. V*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1966, էջ 415-25 («Աժդահակը») եւն.:

[34] Տասնհինգ տարեկան հասակը, ըստ երեւոյթին երիտասարդական ամենալաւ տարիքն է համարուել: Հեքիաթի վերջում պատանին իր հերթին հիւանդ թագաւորին առիւծի կաթ, առիւծի ձագի կաշի եւ անմահական խնձոր հասցնելով, երիտասարդացնում, 15 տարեկան է դարձնում (*ՀԺՀ, հտր. XIII*, էջ 173-77):

[35] Ս. Յարութիւնեան, *Հայ ժողովրդական հանելուկներ*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1965, Երեւան, էջ 196:

Այսպիսով տեսնում ենք, որ Բոր եզ-Ցուլը գարնանամուտի 40օրեայ ցրտերի ընթացքում փոսն ընկած Արեւին զօրացնողն է: Իր այդ առաքելութիւնը կատարելուց յետոյ նա կուլ է գնում Վիշապին, անհետանում է, իսկ Արեւը դրանից յետոյ շարունակում է բացառապէս Վիշապի հետ գործ ունենալ՝ մինչեւ սա էլ ամենավերջում ջրում խեղդուելով, հեռանում է ասպարէզից: Սկզբում նրանք հաշտ են, բայց երբ տղան պարզում է, որ Վիշապի պալատում մարդիկ, թռչուններ եւ գազաններ կան բանտարկուած, խոյի առջեւ միս է դրուած, իսկ գայլի առջեւ՝ խոտ, այդ պահից սկսւում է նրանց երկուսի հակամարտութիւնը: Պատկերը բացայայտօրէն ձմռան գալուստն է ակնարկում, երբ դաշտերում խոյի համար խոտի պակաս կայ, իսկ գայլի համար՝ մսի, ցրտերը կաշկանդում, բանտում են թէ՛ մարդկանց (նրանց տներում), թէ՛ գազաններին ու թռչուններին (թաքստոցներում):

Արեւ պատանու 3՝ սեւ, սպիտակ եւ կարմիր հրեղէն ձիերը, ինչպէս նաեւ Վիշապի 3 ոտանի ձին նոյնպէս եղանակային ծածկագրեր են կրում: Ինչպէս վերեւում ասացինք, հնում տարին 2 կամ 3 եղանակ է ունեցել, որոնք Թովմա Արծրունին կենդանիների օրինակով է յիշատակել առանց աշնան անունը տալու: Նա պատմում է, որ երբ հիւսիսային սառն օդը շնչել է սկսում, վիշապը տագնապում եւ մինչեւ գարնան գալը անդնդախոր տաք վայրեր ձմեռելու է իջնում[36]: Աշունը որպէս ձմեռնամուտ ընկալելու աւանդոյթը պահպանուել էր մինչեւ նորագոյն ժամանակներ: Ազգագրագէտ Վարդ Բդոյեանի պատմելով, երբ Ախալքալաքում գարնանը գորտերը մեծ խմբերով դէպի լեռներն էին բարձրանում, ժողովուրդն ասում էր. «Դիորի (մինչեւ) գորտը չը կըռկըռայ, գարուն չի գայ»: Երբ գորտերն աշնանը լճից տեղափոխւում էին դէպի աղբիւրները, ասում էին. «գորտը գնաց, ձմեռ է»[37]:

Այդպէս էլ Բոր եզի հեքիաթի Վիշապն է Արեւին հետապնդում այնքան, մինչեւ ձմռան շունչը զգացնել է տալիս, եւ ինքը խեղդւում է ջրի մէջ, ինչպէս «Հիմնական առասպել»ի Օձը, որն Ամպրոպի աստծոյ դէմ մղուող կռւում իվերջոյ պարտւում եւ կորչում է Կենաց ծառի արմատների տակ եղած ստորերկրեայ ջրերում:

Ասուածից հետեւում է, որ հայկական հաւատալիքներում Ցուլի մահը գարնան յաղթանակն է ազդարարել, իսկ Վիշապի պարտութիւն-մահը՝ աշնանամուտը կամ որ աւելի ստոյգ է՝ ձմեռնամուտը, քանի որ ԺԲ.-ԺԳ. դարերի տոմարագէտ Վանական Վարդապետը եւս ձմեռնամուտը ոչ թէ Սեպտեմբերի նշանակ Կշէռք (Սեպտեմբերին), այլ Կենդանաշրջանում նրան յաջորդող Կարիճի հարեւան Օձի նշանակ Սահմի (Հոկտեմբերին) է վերագ-

---

[36] Թովմայ Արծրունի եւ Անանուն, *Պատմութիւն տանն Արծրունեաց*, «Մագաղաթ» հրատ., Երեւան, 2006, III, Ը:

[37] Վարդ Բդոյեան, «Երկրագործական պաշտամունքի մի քանի հետքեր հայերի մէջ», *Աշխատութիւններ Հայաստանի պետական պատմական թանգարանի*, 3:1950, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., էջ 8:

րում. «*Սահմի. զի գնայ հարաւայինն եւ գայ հիւսիսայինն (հողմ), եւ դարձեալ իմաստուն արք սահմանեն զտունս իւրեանց առ ի գալ ծմերան*»[38]:

Բոր եզան հեքիաթում ուշագրաւ է Եզին ուղղած Վիշապի «Կամ մաշ, կամ գիւլաշ» մարտակոչը, ինչը պարզ է դարձնում, որ նրանց երկուսի կռիւը նախեւառաջ մէկը միւսից տարածք նուաճելու համար է, եւ այդ տարածքը Կենաց ծառի շրջակայքն է, որը սովոր մի վայր է թէ՛ Ցուլի, թէ՛ Վիշապի համար: Աստղային երկնքում այդպէս Ցուլ եւ Կլաւդիոս Պտղոմէոսի նկարագրած Օձ համաստեղութեան աստղերն են տեղաւորուած Ծիր կաթինի[39] (մեր միասնական աստղային համակարգութեան պատկերը կողքից նայելիս) հակադիր ծայրերում՝ 180 աղեղնային աստիճանի ներքոյ[40]: Նրանց միջեւ 6 ամիս (տարուայ ուղիղ կէսը) եւ Կենդանաշրջանի գօտու 6 համաստեղութիւն է ընկած, որոնցից իւրաքանչիւրը, ըստ Կենդանաշրջանի գօտին կազմած հին աստղաբաշխների մտայղացման, մէկ ամսուան ընթացքում հորիզոնից սահելով, պէտք է իջնէր «գետնի տակ», իսկ նրա նախորդ համաստեղութիւնն առաջ գար: Այդպէս ամիսը՝ մէկ Կենդանաշրջանի գօտու իւրաքանչիւր անհետացած համաստեղութեան փոխարէն մէկ այլ համաստեղութիւն «գետնի տակից» դուրս է գալիս:

Արեւուղու այսինքն՝ Կենդանաշրջանի գօտու վրայ գտնուող իւրաքանչիւր համաստեղութեան դիտելիութիւնը միջին լայնութիւններում ապրողների համար մօտաւորապէս 6 ամիս է: Ինչու՞ մօտաւորապէս. որովհետեւ, թէեւ Կենդանաշրջանի գօտին կազմողները իւրաքանչիւր համաստեղութեան համար մէկ ամսուայ մասնաբաժին են յատկացրել, այդուհանդերձ Արեւը Կոյս համաստեղութիւնը, օրինակ, 1 ամսուայ փոխարէն 1 ամիս եւ 16 օրում է անցնում: Եթէ հին աստղաբաշխներն այս պարզ հաշուարկը կատարած չլինէին, միանգամայն անիմաստ կը լինէր արեւուղու աստղերը 12 համաստեղութիւն-ամիսների բաժանելը: Մեզ տեսանելի աստղային երկնքում այդ

---

[38] «Յաղագս տարեմտին ի Վանական Վարդապետէ ասացեալ» *Մատենադարանի գիրական նիւթերի ժողովածու*, 1:1941, էջ 160:

[39] Կենաց ծառ – Ծիր Կաթին համեմատութիւնը գերմանացի հետազօտող Էրիխ Ցերէնն է կատարել, իսկ դրա վրայ աճող խնձորները նոյնացրել է աստղերին: Ծիր Կաթին երկնային ծառն էլ երկրային ծառերի նման, ըստ տարուայ եղանակների, ունենում է «ծաղկման», «հասունացման» եւ թառամելու ժամանակահատուածներ: (Эрих Церен, *Лунный бог* (Լուսնային աստուածը), «Գիտութիւն» հրատ., Մոսկուա, 1976, էջ 118-20, 203): Նկատի ունի Ծիր Կաթինի պայծառ կամ համեմատաբար խամրած տեսանելիութեան աստիճանները

[40] Ծիր կաթինը, անշուշտ, ծայրեր չի կարող ունենալ, ինչպէս, որ ծայրեր չի կարող ունենալ սկաւառակը կամ մատանին: Այդպիսի սկաւառակ է նաեւ Ծիր կաթինը՝ մեր միասնական աստղային համակարգութեան, որի կողքից մեզ տեսանելի մէկ հատուածը աստղային երկնքի կամ հորիզոնի մի ծայրից միւսն է ձգւում: Հասկանալի է, որ խօսքն այդ ծայրերի մասին է, այլ ոչ թէ բուն միասնական աստղային համակարգութեան:

12ի ուղիղ կէսն է տեղաւորւում: Իւրաքանչիւր ամիս նրանցից մէկն իջնում է հորիզոնից ներքեւ, իսկ ներքեւինը բարձրանում է: Յատուկ հարկ է ընդգծել, որ խօսքը Կենդանաշրջանի գօտու համաստեղութիւնների մասին է, այլ ոչ թէ աստղային երկնքի Հիւսիսային կամ Հարաւային կիսագնդերում տեղաբաշխուածների, որոնցից որոշները միջին լայնութիւններում ապրողների համար կարող են 10 ամսից աւելի կամ պակաս տեսանելիութիւն ունենալ, կարող են ընդհանրապէս չերեւալ կամ երեւալ մշտապէս:

Ի լրումն այս ամէնի, ուզում եմ մէջբերել Բիւրականի աստղադիտարանի լաւագոյն աստղագէտներից մէկը համարուող Նայիրա Ազատեանի խօսքը, որը ինձ ասել է 5 տարի առաջ այս թեմայով զրուցելու կապակցութեամբ. «*Բացառուած է, որ Զոդիակի գօտու որեւէ համաստեղութիւն 10 ամսուայ տեսանելիութիւն ունենայ: Շեղումներ կարող են լինել, բայց՝ այնքան փոքր, որ նոյնիսկ 8 ամիս չեն կարող ծգել*»:

ՎԵՐԱԴԱՌՆԱՆՔ ՅՈՒԼԻՆ ԵՒՎԻՇԱՊԻՆ

Վիշապաքարերի թագակիր Յուլը, որը ձմռան տիրակալն էր, անհետացել է, իսկ Օձը՝ բարձրացել: Գարնան Գ. ամիսն է: Արեւը մտել է Երկուորեակներ: Այդ պատճառով էլ վիշապաքարերի վրայ երկուորեակ գարնանաբեր արագիլ եւ կռունկ են պատկերում: Վիշապը խժռել է Բոր եզին, գարունը վերջնական յաղթանակ է տարել ձմռան ցրտերի նկատմամբ: Վեց ամիս յետոյ՝ աշնանը տեղի կ'ունենայ միանգամայն հակառակը. Զագրոշ եղջրաւոր վիշապը մարտահրաւէր կը նետի Տաւրոս Յլին եւ չարաչար կը պարտուի նրա դէմ մղած կռուում: Այսինքն՝ Արեւն աշնանը դուրս կը գայ Օձ համաստեղութիւնից, Օձը կ'անհետանայ, իսկ նրա փոխարէն, հորիզոնի հակառակ ծայրում աշխարհ կը գայ Օձին յաղթած Յուլ համաստեղութիւնը: Կը սկսուի ձմեռը: Աստղային երկնքի միայն այս իրողութիւններն են օգնում հասկանալ, թէ Հայկական Լեռնաշխարհում նախապէս տարուայ եղանակային ո՞ր շրջափուլում է ըմբռնուած եղել Տաւրոսի եւ Զագրոշի մենամարտը, ինչի մասին աւանդազրոյցը բացարձակապէս ոչինչ չի պահպանել:

ԲԱՐԵԲԵՐ ՕՁԻ ՄԱՍԻՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄԸ

Այսպիսով, Յուլի դէմ նախայարձակ եղած Օձը Բոր եզան հեքիաթում, ի տարբերութիւն գարնան Արեւին զօրացնող Կարմիր Յլի, վնասակար բնոյթով է պատկերացուել, թէպէտ նրա (նրա աստղերի) ծագելը (աշխարհ գալը) գարնան գալստեամբ է ուղեկցուել: «Հաբրմանի» վերնագրով ժողովրդական մէկ այլ հեքիաթում[41] (Շիրակի դաշտավայրից գրառել է Աղեքսանդր Ափրիկեանը) Յուլ չկայ, բայց պարզ նկարագրւում է, թէ ինչպէս գարնանաբեր Օձը կարող է նաեւ բարի բնոյթով ընկալուել, որի անհետանալը կարող է իչիք դարձնել նրա ստեղծած բոլոր բարիքները:

---

[41] *ՀԺՀ, հտր. IV*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1963, էջ 15-26:

Օձի անունը Հաբրմանի է: Սա անտառում թաքնւում է ծերունու ցախերի մէջ եւ գալիս է նրա տուն, ապա պատուիրում է գնալ եւ թագաւորի աղջիկն ուզել իր համար: Թագաւորն օձի առջեւ պայման է դնում մէկ գիշերուայ մէջ պալատ կառուցել, այգի տնկել եւ մէկ կտորանի գորգ փռել դէպի իր պալատը, ապա 7 ձեռք դիոլ-զուռնայով այնպիսի համերգ բացել, որ բոլորը լսեն, բայց երաժիշտներին չտեսնեն: Հաբրմանին կատարում է թագաւորի պատուէրը եւ ամուսնանում է նրա դստեր հետ: Գիշերը նա հանում է իր օձէ շապիկը եւ ջահել տղայ է դառնում: Կնոջը խնդրում է ոչ մէկին չյայտնել իր գաղտնիքը: Կինը սակայն այդ մասին պատմում է քոյրերին: Հաբրմանին անհետանում է: Իր հետ անհետանում են չքնաղ պալատը, գորգն ու այգին: Կինը նրան գտնում է 6 բերդ անցնելուց յետոյ: Եօթերորդ բերդում Հաբրմանին է՝ ջադու Պառաւի գերութեան մէջ, որն ուզում է իր աղջկան ամուսնացնել նրա հետ: Պառաւը Հաբրմանիի կնոջն ուղարկում է պարկերով բմբուլ բերելու, որպէսզի իր աղջկայ օժիտի համար վերմակ, ներքնակ կարի: Հաբրմանիի կինը բարձրանում է սարի գագաթը եւ այնտեղից բղաւում, թէ Հաբրմանին մեռել է: Աշխարհի բոլոր թռչունները գալիս, փետուրները թողնում, հեռանում են: Յաջորդ անգամ Պառաւը Հաբրմանիի կնոջը պատւիրում է իր աղջկայ համար 12 ձեռք հագուստ գտնել, բայց այս անգամ Հաբրմանին եւ իր կինը փախուստի են դիմում: Պառաւն իր աղջկան ուղարկում է նրանց բռնելու: Հաբրմանին կնոջը ջրաղաց է դարձնում, ինքը դառնում է ջրաղացպան: Յաջորդ անգամ կնոջն այգի է դարձնում, ինքը դառնում է այգեպան: Ջադուի աղջիկը ոչինչ չնկատելով, ետ է դառնում: Ջադուն այս անգամ ինքն է հետապնդման նետւում՝ «թոզ ու դուման» բարձրացնելով, երկինքն ու երկիրն իրար խառնելով: Հաբրմանին կնոջը շիւ է դարձնում, ինքը դառնում է օձ եւ փաթաթւում է շիւին: Պառաւը ճանաչում է նրանց: Հաբրմանին խնդրում է հանգիստ թողնել իրենց: Պառաւը հեռանում է, իսկ Հաբրմանին վերականգնում է իր պալատն ու այգին եւ շարունակում ապրել այնտեղ իր կնոջ հետ:

Այս հեքիաթը ծայրից ծայր բաւականին վառ արտայայտուած մի հոյակապ տոմարական առասպել է. ցոյց է տալիս, թէ ինչպէս է օձի յայտնուելուն պէս յայտնւում գարունը, իսկ երբ նա անհետանում է, գարնան չքնաղ բնաշխարհը (պալատը), այգին, մէկ կտորանի գորգը (ծառ ու ծաղկունքը), անտես երաժիշտների համերգը (թռչունների դայլայլը, ծառերի շնկշնկալը) նոյնպէս անհետանում են: Անհետացած Հաբրմանիին նրա կինը 7րդ բերդում է գտնում, որը Կենդանաշրջանի գօտում Կարիճի հարեւան Օձ համաստեղութիւնից հաշուած, 7րդ՝ Ցուլ համաստեղութիւնն է՝ գարնան 2րդ ամսուայ նշանակը (1. Կարիճին կից Օձ՝ Հոկտեմբեր, 2. Աղեղնաւոր՝ Նոյեմբեր, 3. Այծեղջիւր՝ Դեկտեմբեր, 4. Ջրհոս՝ Յունուար, 5. Ձկներ՝ Փետրուար, 6. Խոյ՝ Մարտ, 7. Ցուլ՝ Ապրիլ): Նշանակում է՝ Ցուլ եւ Օձ համաստեղութիւնները կէս տարի անց կրկին 180 աղեղնային աստիճանով փոխել են իրենց դիրքերը եւ Օձը Ցուլի տեղում է յայտնուել: Գարնան առաջին 2 ամիսներում

սկսում է թռչունների փետրափոխութիւնը, ինչի շնորհիւ էլ Ջադուն ուզում է իր աղջկայ համար փետրէ վերմակ, ներքնակ կարել: Ջադուն գարնան առաջին ամիսների ընթացքում նահանջելու դատապարտուած տաքուցուրտ ամիսների մարմնաւորումն է: Այդ պատճառով էլ, երբ Հաբրմանիին եւ նրա կնոջը հետապնդելու է նետւում՝ իրար է խառնում երկինքն ու երկիրը եւ «թոզ ու դուման» է բարձրացնում (գարնան քամիները), իսկ գարնանաբեր Օձը եւ իր կինն ընդհակառակը՝ ջրաղաց ու ջրաղացպան, այգի եւ այգեպան են դառնում (դարձեալ գարնան ցուցիչներ):

Բակտրիական կնիքներ

Հաբրմանին նոյնական է հայկական ժողովրդական հեքիաթների կիսով չափ օձ եւ գեղեցիկ երիտասարդ դարձող Օձ Մանուկին[42]: Նոյն այդ մարդակերպ Օձը բակտրիական կնիքներում Արեւին համադրուած ենք տեսնում: Մի կնիքում նա երկու ձեռքով 2 օձ է բռնել, մէկ այլ կնիքում իր 2 ձեռքերն են օձ: Երկու դէպքում էլ ուսերից Արեւի ճառագայթներ են ելնում՝ ճիշտ այնպէս, ինչպէս շումէրներն ու աքքադներն էին իրենց Ութու–Շամաշ Արեւին ուսերից ելնող ճառագայթներով պատկերում[43]: Օձն Արեւի հետ է համադրուել այն պատճառով, որ գարնանն է գետնի տակից դուրս գալիս: Նոյն կերպ Օձ համաստեղութեան աստղերն են Կարիճի հետ միասին գարնանը «գետնի տակից» հորիզոնի վրայ բարձրանում: Եւ այդպէս կրկնւում է

[42] Նրա կերպարի քննութիւնը տե՛ս՝ Գագիկ Մարտոյան, *Օձավիշապ Արեւի դիցաբանութիւնը*, «Զանգակ» հրատ., Երեւան, 2001:

[43] Victor Sarianidi, *Myths of Ancient Bactria and Margiana on Its Seals and Amulets*, Publisher Pentagraphic, Moscow 1998, էջ 22:

ամէն տարի՝ «մեռնում եւ յարութիւն է առնում», ինչպէս իրականում էլ օձը կաշին փոխելով, ջահելանալու տպաւորութիւն է թողնում[44]:

Շումէրների ու աքքադների Ութու–Շամաշ Արեւը

Այսպիսով, տեսնում ենք, որ ժողովրդական ընկալումներում Օձը (Վիշապը) երկակի բնոյթով է ներկայանում: Եթէ մի դէպքում նրա վնասակար էութիւնն է շեշտւում, երբ նա խժռում է գարնանային Արեւին զօրացնող Ցլին եւ աշնանամուտին (ձմռանը) բանտում է մարդկանց, թռչուններին եւ գազաններին («Հիմնական առասպել»ում առեւանգում է ընտանի անասուններին), հայկական հեքիաթում Խոյի առջեւ միս է դնում, գայլի առջեւ՝ խոտ, միւս դէպքում միանգամայն բարեբեր բնոյթ ունի. յայտնւում է եւ իր հետ գարուն է բերում, անհետանում է ակամայից, բայց կրկին յայտնուելով, մաքառում է ձմռան ցրտերի դէմ եւ դարձեալ գարուն է բերում:

ԱՄԱՌԱՅԻՆ ՏԱՊԻ ՎԻՇԱՊԸ

Վիշապի (Օձի) երկուական բնոյթի վնասակար կողմը միայն նրա անհետանալու հետ միասին ձմռան ցրտերի մուտքով չի դրսեւորւում: Խոյի դարաշրջանում՝ էոնում (երբ գարնանային օրահաւասարի կէտը Խոյ համաստեղութիւն էր) նա աստղային երկնքում տեսանելի է եղել գարնան կէսի, ամբողջ ամռան եւ աշնան կէսի ընթացքում, ուստի նա նաեւ ամռան տապի մարմնաւորումն է: «Սասնայ Ծռեր» դիւցազնավէպում Վիշապը գտնւում է Կանաչ քաղաքում, նստել է սարի գլխին եւ փակել քաղաքի միակ աղբիւրի ակը: Երբ Սանասար եւ Բաղդասար եղբայրները քաղաք մտնելով մի Պառաւի տանն են հիւրընկալւում[45], ծարաւած լինելով, ջուր են խնդրում նրանից: Պառաւը յայտնում է, որ Վիշապի ահից ոչ ոք չի համարձակւում ջրի գնալ: Վիշապը մի պուտ ջուր է բաց թողնում միայն այն ժամանակ, երբ ա-

---

[44] Արեւն օձի հետ է համադրուել նաեւ այն պատճառով, որ օձերը գիշերով իրենց բներն են քաշւում եւ ցերեկով են միայն դուրս գալիս, ինչպէս Արեւն է մայրամուտին հորիզոնից ներքեւ ("գետնի տակ") իջնում եւ արշալոյսին դուրս գալիս:

[45] «Պառաւի տուն»ը Կոյս համաստեղութիւնն է, որում աստղային առասպելները յունական Դեմետրային եւ նրա դստերը՝ Պերսեփոնէ-Կորային են տեղաւորում (А. Бонов, *Мифы и легенды о созвездиях* (Առասպելներ եւ լեգենդներ համաստեղութիւնների մասին), «Ղազախստան» հրատ., Ալմա-Աթա 1985, էջ 98-99:

մուրի աղջիկ են զոհաբերում: Այժմ հերթը թագաւորի մօտ գտնուող մի աղջկայ է հասել: Եղբայրները ձիթհանքի 2 կլոր քար վերցնելով, սարն են բարձրանում, որ Վիշապի վերջը տան: Ահա, յայտնւում է Վիշապը, որ «մէկ գոմշի չափ բարձր է, հինգ գոմշի չափ էրկէն»: Սանասարը եւ Բաղդասարը քարերով ջարդում են նրա գլուխը: Ջրի ակը բացւում է, եւ մարդիկ սկսում են ջուր կրել[46]: Սա նոյն այն դիպաշարն է, որի մասին վերեւում յիշատակեցինք 3 եղբայրներին նուիրուած հեքիաթների մասին խօսելիս. Արեւ երրորդ եղբայրն ամառային արեւադարձի կէտում իջնում է հանդերձեալ աշխարհ, ապա աշնանային օրահաւասարի կէտում յայտնւում է Մութ աշխարհում եւ Պառաւի խորհրդով գնում, սպանում է ջրի ակը փակած Վիշապին: «Սասնայ Ծռեր»ում շեշտադրումն արուած է Մութ աշխարհի կանաչ գոյնի վրայ՝ ցոյց տալու համար, որ խօսքը փարթամօրէն կանաչած, ամառային աշխարհի մասին է, երբ Օձ համաստեղութիւնը սարի նման կորածեւ երկնակամարում շարժուելով, Յուլիս-Օգոստոս ամիսներին երկնքի կատարներին է հասել եւ կալանել է երկնային ջրերը՝ անձրեւները, որոնք ամռանը հազուադէպ երեւոյթ են: Ջրերի ակունքները բացւում են աշնանը, երբ Արեւը դուրս է գալիս Օձ համաստեղութիւնից, եւ Օձն անհետանում է հորիզոնից (Արեւը «սպանում է» իր գագաթնակէտից իջած Օձին):

Նոյն այս առապելը պահպանուել է նաեւ *Յայսմաւուրք*ում. Սբ. Թէոդորոս զօրավարը յայտնւում է Երապոլիս քաղաքում (Խարբերդի նահանգ): Ճանապարհին շոգից նեղուելով, քուն է մտնում պուրակում: Մի կին զգուշացնում է նրան, որ մօտակայ քարայրում վիշապ է ապրում, որը դուրս է գալիս միջօրէին (այսինքն՝ օրուայ ամենաշոգ ժամին): Ահա, գալիս է վիթխարի վիշապը՝ աչքերից կրակ թափելով[47] (դարձեալ ամառային տապի մասին ակնարկ): Թէոդորոսը գեղարդը խրում է նրա գլխի մէջ, որից յետոյ ջուր է յորդում[48]:

Այսպիսով, ասուածն իմի բերելով, կարող ենք եզրակացնել, որ հայկական վիշապները բնոյթով 2 տեսակի են՝ բարեբեր եւ վնասակար, տոմարական առումով, տարուայ հնում ընկալուած երեք հիմնական եղանակների՝ ձմռան (աշնան), գարնան եւ ամառային տապի ազդարարներն են:

ՑԼԱՍՊԱՆ ԱՐԵՒԸ

Հայկական հաւատալիքներում Վիշապի հակառակորդ Ցուլը նոյնպէս 2 տեսակի է՝ բարեբեր եւ վնասակար՝ Կարմիր եւ Սեւ: Ծաղկազարդին՝ Մեծ Պահքի վերջին Կիրակի օրը նշուող գարնանային տօնին երեխաները

---

[46] *Սասունցի Դաւիթ. հայկական ժողովրդական էպոս*, երկրորդ հրատարակութիւն «Հայպետհրատ», Երեւան, 1961, էջ 79-83:

[47] Բանահիւսական նիւթերում կրակը կարող է նաեւ վիշապի բերանից թափուել:

[48] Յայսմաւուրքից մէջբերել է ազգագրագէտ Լիլիթ Սիմոնեանն իր *Հաւքն իր թեւով, օձն իր պորտով* գրքում (ԵՊՀ հրատ., Երեւան, 2011, էջ 91):

«կարկաչա» կոչուող փայտէ աղմկարար կոթաւոր տուփիկը չխկչխկացնելով եւ անձրեւի ձայնին նմանակելով, երգում էին. «Կարկաչա, կարինկաչա, // Սեւ եզան սեւ սամաթեռ, // Կարմիր եզան օղն ու կոճակ»[49]: Սամաթեռը սայլին ամրացուած այն օղակն է, որով խեղդելու աստիճան պինդ ձգում էին չենթարկուող եզան, տուեալ դէպքում՝ Սեւ եզան վիզը՝ նրան զսպելու նպատակով: Դրա փոխարէն Կարմիր եզին, ըստ երեւոյթին, կոճակով օղ են խոստացել, այսինքն՝ թոյլ, նեղութիւն չտուող օղակ: Կարմիր եզը նոյն Բոր (Կարմիր) եզն է, որը Մեծ Պահքի ընթացքում - ինչպէս տեսանք - իր առատութեան եղջիւրներով սնուցում, զօրացնում է Մեծ Պահքի փոսի մէջ գտնուող գարնան Արեւին եւ ապա Պահքի վերջում զոհ է գնում Վիշապին՝ իր մահով հաստատելով ձմռան աւարտն ու գարնան վերջնական յաղթանակը ցրտերի նկատմամբ: Այսինքն՝ Ցուլ համաստեղութիւնը, որն աշնանից սկսած, ամբողջ ձմեռուայ ընթացքում հորիզոնի վրայ էր, այժմ գարնան գալստեամբ, իր տեղը զիջում է Օձ համաստեղութեանը, որն այս անգամ ինքը գարնանամուտից մինչեւ խոր աշուն հորզոնի վրայ պէտք է գտնուի:

Սեւ եզան կերպարը կատարեալ կերպով պահպանել է «Սասնայ Ծռեր» դիւցազնավէպը: Այստեղ նրան հեծնում է Սպիտակ դեւը եւ աշխարհով մէկ պտտուելով, աւերածութիւններ է գործում, գերի է տանում կոյս Արմաղանին, երբ վերջինս զբօսնում է «խաս բաղչ»ում[50], այնպէս, ինչպէս յունական դիցաբանութեան մէջ անդրաշխարհի տիրակալ Հադէսն է յանկարծակի առեւանգում ծաղկունքի դիցուհի Պերսեփոնէ-Կորային, երբ սա իր ընկերուհիների հետ զբօսնում էր Նիսիական ծաղկուն հովտում[51]: Պերսեփոնէի վերադարձը հանդերձեալ աշխարհից գարնան վերադարձն էր խորհրդանշում, իսկ հայկական դիւցազնավէպում Արմաղանին վերադարձնելու համար Սեւ եզի եւ Սպիտակ դեւի դէմ կռուի է դուրս գալիս Մեծ Միհր (Միհր) Արեւը: «*Ժամանակը գարուն էր*,- ասում է էպոսը,- *Սար հազար ծաղկունքով, աւելուկով լեցուն էր*»: Միհրը նախ մի ճահճուտ վայրում գտնում է Սեւ եզին եւ թուրը փորն է խրում, ապա կռուի է բռնւում Սպիտակ դեւի հետ, որի մարմինը խմորի նման է: Միհրը, երբ ձեռքը գցում է՝ խոր խրւում է դեւի մարմնի մէջ, սակայն իվերջոյ նրան էլ է սպանում[52]: Այդպէս Արեւը յաղթում է շուրջը սպիտակ, փխրուն, խմորի նման փափուկ ձիւնով ծածկող ձմռանը, որը Միրչա Էլիադէի յայտնի տեսութեան՝ տարեվերջեան քայքայուող Տիեզերքն է: Նրա մահով վերածնւում է նոր տարին, տուեալ դէպքում՝ գարնանային տարեմուտը:

---

[49] Արտակ արքեպիսկոպոս Մանուկեան, *Հայ եկեղեցու փօները*, Թեհրան, 1999, էջ 110:

[50] *Սասունցի Դաւիթ*, էջ 108-10, 112:

[51] *Гомеровы гимны, К Деметре*, (в кн. *Эллинские поэты*), (Հոմերական հիմներ, V, Դեմետրային, 10 («*Հելլէնական բանաստեղծներ* գրքում)), «Գեղարուեստական գրականութիւն» հրատ., Մոսկուա 1963:

[52] Սասունցի Դաւիթ, էջ 110-13:

«Սասնայ Ծռեր»ում նոյն կերպ Մեծ Միհրի որդի Սասունցի Դաւիթն է, որպէս Արեւ, նախ գարնան առաջին 40 ցուրտ օրերի նշանակ 40 գազանոց հորում յայտնուում, ապա հորից դուրս գալով, մարտի է գնում իր ախոյեան Մսրայ Մելիքի դէմ, որն էպոսում բացայայտօրէն ցլային յատկանիշերով է նկարագրւում. Մելիքը քնած է վրանում, բերանից շոգելք է դուրս գալիս (ինչպէս ցլի բերանից՝ ցուրտ եղանակին), 7 ամուրի աղջիկ նրա վրայից ճանճերն են քշում (ինչպէս ճանճերն իրականում էլ ցլի անբաժան ուղեկիցներն են): Երբ Մելիքն արթնանում, տեսնում է Դաւթին, փչում է, որ թռցնի, բայց երբ Դաւիթն իր տեղում կանգնած է մնում, «մօտէն քառսուն գոմշի ուժ է պակասում»[53]: Մելիքը թաքնւում է հորում (հորիզոնից իջնում է գետնի տակ) եւ վրան 40 գոմէշի կաշի է քաշում, երբ Դաւիթն իր վերջին, վճռական հարուածը պէտք է հասցնի նրան[54]: Մելիքը նոյնիսկ գութանի «զնճիլ» ունի, որով կալանում է Դաւթին, սակայն Դաւիթը կտրում է դա[55]: Հայկական դիւցազնավէպը ճշգրտօրէն տեղորոշել է նաեւ Մսրայ Մելիքի դիրքն աստղային երկնքում. նրա ճանճերը քշող եօթ ամուրի աղջիկները Ցուլ համաստեղութեան աստղակուտակ Բազումքի 7 աստղերն են, որոնք աստղաբաշխութեան մէջ յունական դիցաբանութեան տիտան Ատլանտի 7 դուստրերն են: Յունաստանում նրանց ծագելն անձրեւների շրջանն էր ազդարարում[56]: Հայկական դիւցազնավէպում անձրեւը յաջորդում է Մելիքի սպանութեանը, ինչն արտայայտուած է նրա մօր՝ Իսմիլ Խաթունի երազում. «*Մըսրայ էրկիր ամպ էր, մութն էր, // Մըժ էր, անձրեւ կը գար: // Հեղեղ կայնաւ. Հեղեղի ջուր դառաւ արուն, // ու ջանդաքներ մէջ կը գանէր*»[57]: Այսինքն՝ ստացւում է այնպէս, որ ինչպէս Վիշապի, այնպէս էլ Սեւ եզան սպանութիւնը՝ Արեւի դէմ կռուելով, հորիզոնից նրա անհետանալն անհրաժեշտ պայման է, որպէսզի սկսուեն գարնանային կենարար անձրեւներն ու դրանց հետեւանքով առաջացող սելաւ-հեղեղները, եւ սեւ հողն առանձնանայ սպիտակ ձիւնից:

ՎԻՇԱՊԻ ԵՒ ՑԼԻ ՄԱՐՄՆԱԿԱԶՄԱԿԱՆ ԽԱՌՆՈՒՐԴԸ

Վերեւում շարադրուած Տաւրոսի եւ Զագրոշի մասին ժողովրդական աւանդազրոյցը Տաւրոսին, չնայած նրա անուան ցուլ բացատրութեանը, նոյնպէս վիշապ է ներկայացնում, իսկ վիշապ Զագրոշին՝ եղջրակիր: Տպաւորութիւնն այնպիսին է, որ ժողովրդական մտածողութիւնը երկուսին էլ ցլավիշապի մարմնակազմական խառնուրդով է պատկերացրել: Ճիշտ այդպէս արեւելեան սլաւոններն իրենց Ամպրոպի աստծու՝ Պերուն-Պերկունասի

---

[53] Նոյն, էջ 263-37:

[54] Նոյն, էջ 245:

[55] *Սասնայ Ծռեր, հտր. Բ, II մաս*, «Հայպետհրատ», Երեւան, 1951, էջ 220:

[56] Библейская энциклопедия архимандрита Никифора, («Плеяды»), Типография А. И. Снегирёвой, Մոսկուա 1891 – 1892.

[57] *Սասունցի Դաւիթ*, էջ 219:

հակառակորդ Վելէս օձին էին ցուլի եղջիւրներով պատկերում[58]: Ճիշտ այդպէս է «Սասնայ Ծռեր» դիւցազնավէպում սարի գլխին նստած վիշապը նկարագրւում՝ «*մէկ գոմշի չափ բարձր, հինգ գոմշի չափ էրկէն*» (տես վերեւում): Նախիջեւանցիները նոյնպես պատմել են, որ Օձասար լեռան վրայ եղջրակիր վիշապ թագաւոր է ապրում, որն իր հպատակների հետ իջնում, աղբիւրից ջուր է խմում[59]: Նոյնպիսի մի օձ ապրելիս է եղել Վարանդայի Քառասնի գիւղի մօտ գտնուող բարձր ժայռի վրայ եւ ոսկէ եղջիւրներ է ունեցել[60]: Համշէնահայերը ե՛ւ հաւատացել են եղջրաւոր օձի գոյութեանը ե՛ւ նոյնիսկ նրա եղջիւրն են ցոյց տուել՝ «*փոքրիկ, սուրուլիկ, մի քիչ ծակուած ոսկոր՝ սեւագոյն ու դրսից պլպլուն*»[61]: Տպաւորիչ է յատկապէս Մշոյ Առաքելոց եկեղեցու դռան (1134, Հայաստանի պատմութեան թանգարան) ձախ կողմում պատկերուած կենդանիների շարքում երկու իրար յաջորդող ցուլերից մէկի պատկերը, որի պոչը վիշապ է: ԺԵ. դարի մի վիշապագորգում, որը Բեռլինի իսլամական արուեստի թանգարանում է պահւում եւ ներկայացւում է իբրեւ անատոլիական մահմեդական մշակոյթի նմուշ, պարզ երեւում է, որ տեղական վաղնջական վիշապի եւ ցլի ոճաւորուած մարմնակազմական միասնութիւնն է պատկերուած: Բակտրիական մի կնիքում էլ յստակ երեւում է ցլի եւ վիշապի մարմնակազմական խառնուրդը[62]:

Մշոյ Առաքելոց եկեղեցու դռան մանրամաս

Անկախ այն հանգամանքից, որ ցուլի պոչն իրականում էլ օձանման է, Օձավիշապի մարմնակազմական խառնուրդի մասին նմանօրինակ պատկերացման հիմքը Խոյի դարաշրջանում աստղային երկնքի Օձի եւ Ցլի փոխադարձ «ծնունդով» եւ «մահով» է պայմանաւորուած (մէկի մահը միւսի

---

[58] Օ. Դիքսոն, Պ. Գրոսս, *Тайны древних наук* (Հնագոյն գիտութիւնների գաղտնիքները), изд. «Рипол классик», Մոսկուա 2001, էջ 18:

[59] Ե. Լալայեան, *Ջաւախքի բուրմունք*, տպ. Մ. Դ. Ռուսինեանց, Թիֆլիս, 1892, էջ 45-46:

[60] Ե. Լալայեան, *Երկեր, հտր. II*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1988, էջ 171:

[61] Յ. Մուրադեան, *Համշէնցի հայեր*, տպ. Կ. Մարտիրոսեանց, Թիֆլիս 1901, էջ 93:

[62] Sarianidi, էջ 22:



ԺԵ. դարի մի վիշապագորգ

ծննդեան պատճառն է եւ՝ հակառակը): Ինչպէս տեսանք, նրանք տարուայ 2 կէսերի՝ գարնան (ամռան) եւ աշնան (ձմռան) մունետիկներն են: Տարուայ 12 ամիսներից 6ում, գարնանից սկսած (ներառեալ ամառը), հորիզոնից վեր է գտնւում Օձ համաստեղութիւնը, իսկ այդ ընթացքում Ցուլը չի երեւում: Յաջորդ 6 ամսում, աշնանից սկսած (ներառեալ ձմեռը), Ցուլն է երեւում, իսկ օձն անտեսանելի է[63]:

Առասպելաբանաստեղծական մտածողութեամբ, երկուսն էլ թէպէտ միմեանց նկատմամբ հակամարտութեան մէջ են, այնուամենայնիւ տարուայ բոլորապտոյտի 2 տարբեր անքակտելի, բաղկացուցիչ մասերն են՝ ամառուայ եւ ձմեռուայ խորհրդանիշերը, ինչպէս ժողովուրդն այժմ էլ տարին 2 կէսից է (ամառ - ձմեռ) բաղկացած համարում: Այդ պատճառով էլ Վիշապը եւ Ցուլը հակադրամիասնականութեան մէջ են դիտարկուել, որպէս մէկը միւսի մարմնակազմական շարունակութիւն:

Վիշապն, ուրեմն, նոյնինքն Ցուլն է, բայց այդքանով միայն չի սահմանափակւում Վիշապի կենդանական բազմորդութիւնը: Հայ հին հեթանոսական հաւատալիքները քննադատող Կողբացին վիշապներ էր անուանում հսկայ ձկներին[64]: Հայկական մի աւանդազրոյցի համաձայն, այդպիսի մի Վիշապ է ովկիանոսում ապրող Լեւիաթանը, որի գլխին աշխարհի այս ու այն կողմում փայլփլող ադամանդ քար կայ: Իր սեփական պոչը որպէս թշնամի է ընդունում եւ ուզում է կծել, բայց չի կարողանում: Եթէ մի օր այդ բանը նրան յաջողուի՝ աշխարհը կը կործանուի: Լեւիաթանի գլխի ադա-

[63] Յաջորդ կիսամեակներում 2 համաստեղութիւնների այս դրափոխութիւնը տարուայ նոյն եղանակներում կարող է կրկնուել մէկ դարաշրջանի (էոնի) ընթացքում՝ շուրջ 2160 տարի, քանի որ ադքան է Կենդանաշրջանի մէկ համաստեղութեան մէջ մնում գարնանային օրահաւասարի կէտը՝ ըստ առաջընթացութեան երեւոյթի: Այս մասին տե՛ս՝ И. А. Климишин, *Календарь и хронология* (Օրացոյց եւ ժամանակագրութիւն), изд. «Наука», Մոսկուա 1985, էջ 25-26:

[64] Կողբացի, էջ I, ԻԵ:

մանդն այս աւանդազրոյցում, իհարկէ, աստղ է, իսկ ինքը՝ երկնքի Հիւսիսային կիսագնդում գտնուող Օձ համաստեղութիւնը:

Բակտրիական կնիքի ցուլն ու վիշապը

Յաջորդ աւանդազրոյցը Լեւիաթանին Լեկէոն ձուկ է անուանում, որը Ղաֆար Ղոջա անունը կրող առասպելական սարի շուրջ 6 ամսում մէկ պտոյտ է կատարում: Ապա քաղցում է: Երախը բացում է, ինչքան, որ պէտք է, ջուր է կուլ տալիս եւ փչում է դէպի սարի գագաթը: Ջուրը հեղեղի նման սարից իջնում է ներքեւ եւ ճանապարհին սրբում, տանում է ամէն ինչ՝ բուսականութիւն, գազաններ, որոնք գալիս եւ հեղեղի հետ նրա փորն են լցուում[65]: Պարզ է, որ Լեկէոնի երախում հաւաքուած, ապա արտանետուած այդ ջրերը գարնան անձրեւների եւ սելաւների փոխաբերութիւնն են, իսկ սարը, որի շուրջ Լեւիաթան-Լեկէոն Օձ համաստեղութիւնը պտտւում է 6 ամսում, սարի տեսք ունեցող կամարաձեւ երկինքն է, որտեղ գարնանը յայտնուելով, նա 6 ամիս երեւում, այնուհետեւ կորչում է «գետնի տակ»: Աշնանը նրան հերթափոխելու եկած Ցուլ համաստեղութիւնն այս անգամ ինքն է ամբողջ ձմռան ընթացքում իր փորի մէջ հաւաքում երկնային եւ երկրային ջրերը (երկնքում անձրեւը վերածում է ձեան, իսկ երկրի վրայ սառեցնում է լեռնային աղբիւրների ակունքները):

Երկնային եւ երկրային ջրերը խմած Ցուլի ուռած, փքուած պատկերը կարելի է տեսնել Վանի թագաւորութեան պեղածոյ իրերի շարքում: Գտնուել են կլորաւուն կաթսաներ, սկահակներ, որոնց ցլի գլուխներ են ամրակցուած: Վանից գտնուած այդպիսի կաթսաներից մէկը դրուել է եռոտանու վրայ, որի ոտքերը ցլի կճղակներ ունեն[66]: Նոյն այդ Ցուլը պատկերուած է նաեւ Հայկական Լեռնաշխարհին բնորոշ Վիշապ կոչուող քարակոթողներին, որոնք քառակող սեղանատիպ տեսք ունեն կամ ձկնակերպ են եւ բարձր լեռնային գոգաւորութիւններում, մեծ մասամբ ջրային աւազանների մօտ են յայտնաբերւում: Կարելի է ասել, որ սեղանատիպ վիշապաքարերի դէմքը քարի վերին մասում պատկերուած զոհաբերուած Ցլի գլուխն է, որի վերջոյթներն առանձին են ցուցադրւում: Որոշ ցլերի բերանից արտայայտիչ կերպով ջրի հզօր շիթեր են թափւում՝ գարնան սելաւների ու անձրեւների հոսքն այն բանից յետոյ, երբ Ցուլ համաստեղութեանը «սպանում է» կամ

[65] Ղանալանեան, էջ 129-30:

[66] B. B. Piotrovskii, *The Kingdom of Van and Its Art*, published by Frederick A. Praeger, New York-Washington 1967, էջ 39-40, 76-77, fig. 26, 56, pl. 26:

Արեւը կամ Վիշապը: Սալաքարի միջնամասում երբեմն 2 զուգաչափ դիմահայեաց գարնանաբեր կռունկների կամ արագիլների պատկերներ են դրոշմուած՝ Երկուորեակներ համաստեղութեան խորհրդանիշը, որտեղ գարնան Գ. ամսին մուտք է գործում Արեւը Բ. ամսուայ նշանակ Ցուլ համաստեղութեանը «տապալելուց», «գետնի տակ» իջեցնելուց յետոյ: Ձկնակերպ վիշապների վրայ արուած փորագրումները կամ խիստ սահմանափակ են, կամ էլ իսպառ բացակայում են: Ակնյայտ է, որ ժողովուրդը Վիշապի եւ Ցլի մարմնակազմական խառնուրդը ցոյց տալու համար չի բաւարարուել միայն սալաքարի վրայ Ցուլ քանդակելով եւ այդ սալաքարը «Վիշապ» կոչելով: Որպէսզի ցոյց տայ նաեւ, որ ամռան (գարնան) եւ ձմռան (աշնան) յարափոփոխ ընթացքի 2 ազդարարները՝ Վիշապը եւ Ցուլը ոչ միայն երկնային եւ երկրային ոլորտների, այլեւ եռամաս Տիեզերքի երրորդ հատուածի՝ ստորերկրայքի տիրակալներն են, ստեղծել է Ցլավիշապից ածանցուած երրորդ կենդանու կոթողը ձկան պատկերով, իբրեւ ծովերի՝ հանդերձեալ աշխարհի ներկայացուցիչ: Այդ է պատճառը, որ վիշապները նաեւ դամբարանային միջավայրում են յայտնաբերւում[67]: Ցլի, ձկան եւ վիշապի մասին բոլոր այս պատկերացումները հիմք են տալիս վիշապաքարերին «Ցլավիշապաձուկ» անուանել, ինչը, չնայած իր երկարահնչութեանը, աւելի ստոյգ է արտայայտում այս յաղթակոթողներից իւրաքանչիւրի տոմարական բովանդակութիւնը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Ամփոփելով ասենք, որ բերուած նիւթը ցոյց է տալիս, թէ վաղ քաղաքակրթութեան արշալոյսից սկսած, մինչեւ նոր ժամանակներ որքան առանցքային նշանակութիւն է ունեցել աստղային երկինքը մեր նախնիների առօրեայում: Նոր քարի դարում մարդը նստակեաց երկրագործ դառնալով, եղանակային օրինաչափութիւնները հասկանալու, տոմար ունենալու անհրաժեշտութիւն է ունեցել: Առանց տոմարի, հնարաւոր չէր ո՛չ տնտեսական, ո՛չ էլ հոգեւոր կեանք կազմակերպել, իսկ առանց աստղային երկնքի շարժմանը հետեւելու հնարաւոր չէր տոմար ունենալ: Այլ կայուն ցուցիչներ բնութեան մէջ կարելի է համարել, թերեւս, կենդանիների վարքը՝ նրանց զուգաւորման ծնի, չուելու, վերադառնալու, թաքստոցները մտնելու-դուրս գալու ամիսները: Բայց դա այլ թեմա է, որին հարկ է առանձին ուսումնասիրութիւններով անդրադառնալ: Այստեղ անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ հների աշխարհայեացքը բացատրելիս, նրանց աստղագիտական ընկալումներին առաջնային տեղ յատկացնելը նշանակում է գլխաւոր նիւթի ա-

[67] Աշոտ Փիլիպոսեան, Ռուզան Մկրտչեան, Յասմիկ Սիմոնեան, Արտաւազդ Զաքեան, Արսէն Բոբոխեան, «Լճաշէնի "Վիշապի" դամբարանը. նորայայտ կենսափաստեր», *Վիշապը հեքիաթի եւ իրականութեան սահմանին*, Երեւան, 2019, Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի հրատ., էջ 573-74:

ծանցեալ դրսեւորումները բացատրել միայն: Նստակեաց երկրագործի համար գլխաւորն աստղային երկնքի լուսատուներն են եղել եւ դրանց տեղաշարժերի ուսումնասիրութիւնը, ինչի արդիւնքում են առաջացել հին աշխարհի դիցաբանական պատկերացումները, ինչպէս նաեւ արուեստն ու ճարտարապետութիւնը: Մենք այստեղ միքանի դրուագ քննարկեցինք միայն հների աստղագիտական-տոմարական պատկերացումներից: Այլ օրինակներ ամէնուրեք կարելի է նկատել:

THE CONSTELLATION CODES OF THE OX AND THE SERPENT
IN OLD ARMENIAN PERCEPTION DURING DIFFERENT SEASONS
(SUMMARY)

GAGIK MARTOYAN
martoyangagik474@gmail.co

Basing their work on Balto-Slavic Bilin epic tales, prominent Russian philologists V.V. Ivanov and V.VI. Toporov reconstructed the myth of the duel between the bull-shaped God of Thunder and the Serpent. In the battle the Serpent is defeated and disappears into underground waters. Ivanov and Toporov claim that in Middle Eastern versions of this myth, the winner may be the Serpent. Besides, the Sun may also prevail over the Serpent.

Armenian beliefs have preserved two types of snake images. One of them is the horned Zagrosh, which is defeated by the bull Tavros. In the other version, the Snake fights the Ox and eats it. Armenian beliefs have two types of oxen: Black and Red. During the spring of the Palm Sunday holiday, in the Armenian tradition Black Ox is promised a rope around its neck that will choke it, while the Red Ox is promised a rope with a button. In the epic poem of *Daredevils of Sasun*, the White devil (symbol of winter), sits on the Black Ox and, moving around the world, ruins it. The Elder Mher (Mithra, the sun) kills them both, thereby driving away winter and bringing the spring and the New Year.

At the same time, the Serpent also takes part in the victory over the ox. In the universe they are embodied in the constellations of the Taurus and the Serpent. In spring, when the Sun leaves Taurus, the latter disappears below the horizon. At the same time, the Snake appears on the horizon. Thus, while simultaneously "killing" Taurus, both the Sun and the Snake bring the long-awaited spring. During this period, the Snake is perceived as a good beginning, but during summer it is perceived as harmful. In the middle of summer, the snake is in its culminating position in the sky and blocks the paths of heavenly waters (rains), generating heat and drought. During autumn, when the Sun enters and leaves the constellation of the Serpent, the latter disappears below the horizon. One gets the impression that in the autumn both the Sun and Taurus simultaneously triumph over the Snake. Thus, Taurus and the Snake remain above the horizon in turn for 6 months, thereby becoming the harbingers of spring (Snake) and winter (Taurus).

Popular beliefs considered large fish to be snakes, naming one of them Leviathan and the other Legeon. Legeon revolves around Mount Ghafar - Ghoja (the

personification of the domed, mountain-like sky) for 6 months and brings with it spring and autumn showers and floods.

This series of weather changes is depicted on the stone stellae (Vishap) which have a sacrificed bull carved on them. From its mouth spring waters flow strongly. Below the carving of the bull, sometimes silhouettes of spring birds, of storks and cranes, can be seen. They both symbolize the Gemini constellation, into which the Sun enters in the spring, after killing the Taurus and gaining the final victory over winter.

In the mountains Vishaps also look like huge stone fish, which are derived from the image of the Serpent.